«ԹԵՎԵՐ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Թևեր ստանալու ամենահեշտ միջոցը դրանք ուրիշին պարգևելն է»

2023 թվականի սեպտեմբերի ողբերգական իրադարձություններից հետո ավելի քան 120,000 արցախցի, այդ թվում՝ **30,000 երեխա**, ստիպված եղան լքել իրենց հայրենիքը և հայտնվեցին չափազանց բարդ պայմաններում: Վերջին հինգ տարիների ընթացքում այս երեխաները վերապրել են պատերազմ, լիակատար շրջափակում, բռնի տեղահանում և, հայրենի հողում գտնվելու վերջին օրը՝ պայթյուն, որն իրենց հայրերի կյանքն է խլել ու փշրել նրանց աշխարհը: Այս խորագույն տրավման լուռ ցավ է թողել՝ արտահայտված նրանց աչքերի խոր տխրության մեջ:

Այս հումանիտար ճգնաժամին արձագանքելու նպատակով **«Մենք ենք մեր սարերը» Զարգացման գործակալությունը** 2023-ի նոյեմբերին մեկնարկել է **«Թևեր»** եռամյա վերականգնման ծրագիրը՝ նախատեսված 4–18 տարեկան երեխաների և նրանց ծնողների համար, ովքեր բռնի տեղահանվել են Արցախից և այժմ բնակվում են Հայաստանի տարբեր համայնքներում:

Ծրագրի նպատակն է վերականգնել երեխաների և դեռահասների **ֆիզիկական, հոգեբանական և մտավոր** բարեկեցությունը: Ծրագիրն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հոգեբանական վերականգնմանը, ծնողների տեղեկացվածությանը երեխաների կարիքների վերաբերյալ, համայնքային համախմբմանը և նոր միջավայրում սահուն ինտեգրմանը:

ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՆ՝

- **Հոգեբանական վերականգնում՝** ստեղծագործական և տրավմա-ինֆորմացված մեթոդներով. հեքիաթաթերապիա, արտ-թերապիա, դիմադրողականություն զարգացնող վարժություններ, դրամաթերապիա, խաղաթերապիա, ավազաթերապիա, հիպոթերապիա, դիմակների պատրաստում, կոլաժ, կավի ձևավորում, մանդալաթերապիա, թելով նկարագրություն և այլ մեթոդներ (ընդհանուր՝ 36 ժամ): **Ծնողական աջակցություն՝** խմբային և անհատական թերապևտիկ հանդիպումներ, ինչպես նաև սոցիալական կապեր և համայնքային կապեր ձևավորելու միջոցառումներ:
- **Ֆիզիկական վերականգնում՝** սպորտային թերապիայի միջոցով. լող, վոլեյբոլ, ֆուտբոլ, պար, յոգա (ընդհանուր՝ 24 ժամ):
- **Մտավոր վերականգնում՝** երկօրյա ինտենսիվ ծրագիր, որն ուղղված է ադապտացիային և սոցիալական հմտությունների զարգացմանը (ընդհանուր՝ 16 ժամ):
- **Սոցիալ-մշակութային ադապտացում՝** ուսումնական այցելություններ, համայնքային միջոցառումներ և էքսկուրսիաներ, որոնք նպաստում են մասնակիցների ինտեգրմանը նոր համայնքներում:

«ԹԵՎԵՐ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

- ✓ **Տրավմայի շրջանի խզում.** աջակցություն ստացած երեխաները մեծ հավանականությամբ կդառնան դիմակայուն մեծահասակներ՝ կանխելով տրավմայի փոխանցումը ընտանիքներում և համայնքներում:
- ✓ **Հոգեբանական ապաքինում**. երեխաները կսովորեն հաղթահարել կորուստը, արտահայտել իրենց հույզերը և զարգացնել դիմադրողականություն՝ վերադառնալով լիարժեք կյանք:
- ✓ **Սոցիալական ինտեգրում.** երեխաները կզարգացնեն նոր սոցիալական կապեր ստեղծելու, նոր միջավայրում հարմարվելու և աջակցող ցանցեր կառուցելու հմտություններ:
- ✓ **Ընտանիքների աջակցություն.** ծնողները կհանգստանան՝ գիտակցելով, որ իրենց երեխաները ստանում են անհրաժեշտ հոգատարություն և աջակցություն, ինչը կնվազեցնի նրանց սթրեսն ու անհանգստությունը:

ԲՅՈՒՋԵ

Ծրագրի արժեքը մեկ երեխայի հաշվով՝ (ներառյալ ծնողի հետ աշխատանքը)	**600 ԱՄՆ դոլար**

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 600 000 ԱՄՆ դոլար

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համագործակիցներ՝	**Դիլիջանի և Հալիձորի համայնքային կենտրոններ, Intra հոգեկան առողջության կենտրոն, Արևամանուկ հիմնադրամ, UWC Dilijan քոլեջ, Սուպերհերոսների դպրոց, Կապանի երիտասարդական կենտրոն, IDEA հիմնադրամ:**
Աշխարհագրություն	**ՀՀ բոլոր մարզեր**
Իրականացման ժամկետ	**Նոյեմբեր 2023 – Դեկտեմբեր 2026 թթ.**

ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

- Անմիջական շահառուներ՝ 100**0 երեխա և 400 ծնող**
- Անուղղակի շահառուներ՝ **մոտ 250 տուժած ընտանիք**

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը նախատեսում է մասնակիցների առաջընթացի մշտադիտարկում, խնդիրների բացահայտում և միջամտությունների հարմարեցում՝ ըստ անհրաժեշտության: Այս ճկուն մոտեցումը երաշխավորում է, որ աջակցությունը կլինի երկարաժամկետ և համահունչ բոլոր շահառուների կարիքներին: